ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025 թ.սեպտեմբերի 10-ին, N329-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 549–Ա որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի 4.1 կետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2025 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի 93 հասցեում գտնվող Նորայր Սիսակյանի անվան N 5 ավագ դպրոցում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Փրկարարական և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով:

2. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը,

2) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ և օպերատիվ խումբը,

3) ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Ապարանի հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ,

4) ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակի առաջին վաշտից մեկ կարգախումբ,

5) ՀՀ ԱՆ <<Հանրապետական շտապ օգնության ծառայություն>> ՓԲԸ մեկ բրիգադ,

6) <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Աշտարակի շրջանային էլեկտրոցանցից մեկ վթարային խումբ,

7) <<Գազպրոմ Արմենիա>> Արագածոտնի գազամատակարարման գազաֆիկացման մասնաճյուղի Աշտարակի տարածքային տեղամասից մեկ վթարային խումբ,

8) Նորայր Սիսակյանի անվան N 5 ավագ դպրոցի կազմավորումները,

9) Աշտարակի համայնքապետարանը:

3. Սահմանել որ՝

1) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավար է հանդիսանում << Արագածոտնի մարզպետը,

2) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ << Արագածոտնի մարզպետի տեղակալը,

3) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ << ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետը:

4. Հաստատել՝

1) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1–ի,

2) Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանը՝ համաձայն հավելված 2–ի:

5. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) ապահովել բոլոր մասնակիցների ներգրավվածությունը ուսումնավարժությանը,

2) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի հետ մասնակիցներին ծանոթացումը,

3) մինչև 2025 թվականի սեպտեմբերի 15-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025թ. սեպտեմբերի 8-ը ներկայացնել հաստատման,

2) կազմակերպել ուսումնավարժության ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի:

7. Գործնական միջոցառումների խմբի ղեկավարին՝

1) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ,

2) ապահովել գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը,

3) անվտանգության կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող միջոցառումները:

8. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

2) գործնական միջոցառումների ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

3) պատրաստ լինել զեկուցելու ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավարի տեղակալի վրա:

10. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

9/11/2025

X

VERIFIED OCSP 9/11/2025 17:46:22 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

ՍԱՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2025թ. սեպտեմբերի 10 թիվ 324-Ա որոշման

ԿԱԶՄ

ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Ղեկավարման շտաբի պետ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մ. Ասատրյան:

1.1 Խաղարկման խմբի ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Ա. Հարությունյան:

Խաղարկման խմբի անդամ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ՕՀՀ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Ա. Դավինյան:

1.2 Վերլուծության նախապատրաստման խմբի ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ, փ/ծ փոխգնդապետ Հ. Մուրադյան:

Վերլուծության նախապատրաստման խմբի անդամ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գ. Ավագյան:

1.3 Գործնական միջոցառումների խմբի ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա. Շամիրյան:

Գործնական միջոցառումների խմբի անդամներ՝

1) վթարավերականգնողական աշխատանքների ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի ՀՓՋ հրամանատար, փ/ծ գնդապետ Հ. Հակոբյան:

2) փրկարարական աշխատանքների ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի ՀՓՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ կապիտան Վ. Ղազարյան,

3) հրդեհաշիջման աշխատանքների ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի ՀՓՋ 3-րդ հերթափոխի օղակի հրամանատար, փ/ծ ավագ Վ. Մանուկյան:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

11.09.2025

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2025թ. սեպտեմբերի 10 թիվ 324-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1. Կազմակերպչական միջոցառումներ				
1.	Ելակետային տվյալների որոշում ուսումնավարժության մտահաղացման մշակման համար	մինչև 11.08.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
2.	Ուսումնավարժության անցկացման վայրի տեղազննության կազմակերպում	մինչև 14.08.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
3.	Ուսումնավարժության նախապատրաստման ուղղությամբ խորհրդակցության անցկացում	մինչև 15.08.2025թ.	Ուսումնավարժության ղեկավար	
2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում				
1.	Ուսումնավարժության մտահաղացման մշակում /ուրվագծի տեսքով/	մինչև 18.08.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	

2.	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	մինչև 18.08.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 08.09.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3. Ուսումնավարժության վայրի և մասնակիցների նախապատրաստում				
1.	Ուսումնավարժության տեղամասերի նախապատրաստում	մինչև 05.09.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
2.	Ուսումնավարժության մասնակիցների հետ պարապմունքների անցկացում	մինչև 11.09.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3.	Ուսումնավարժության մասնակիցներին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	մինչև 12.09.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
4.	Զեկույց ուսումնավարժության ղեկավարին ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին	15.09.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

11.09.2025

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Գևորգյան